

գետեղելու իր ճիշդ ոլորտին մէջ: Թուրքիոյ մէջ Սիւպերիան ամէն գիւղի սահմանէն կը սկսէր:

Ըսի, թէ խուսափեցաւ ճշդելէ իր ծննդավայրը: Բայց թարմ, գունազեղ կենդանութիւնը իր կարգ մը զգայնութիւններուն պերճախօս էր շատ: Քաղաքի տղայ մը լեռ մը իբրեւ պատկեր կը զգայ ու կ'արտայայտէ: Իր զգայարանքները, առաւելապէս մորթը կը մատնեն օտարը, հանդիսատեսը, հիւրը: Լերան տղուն ճայնէն իսկ լեռ կը հոտի: Զոր, գետակ, ձիւն, կանանչ արօտներ, անհուն ծաղկաստանը հայ հաստամեստներուն, ջուրեր, լիճեր՝ իբրեւ փշրանք անոր քաղաքական, ընկերաբանական ընդլայնումներուն մէջ կը թռէին յանկարծակի, թելադրելով հոգեյատակը, որ գումարն է այդ զգայնութիւններուն: Ըսի, թէ ուր կը տարբերի քաղաքի տղան գեղացիէն: Առաջինը թատրոն, խաղ, դպրոցական արշաւներ, օդափոխութեան պատկերներ միայն պիտի յիշէ, երբ մեծնայ: Մաթիկին անդրանիկ աշխարհը խաւարած ամայք մըն է: Բայց անոր յուշքերուն մէջ ես կարծեցի հաստատել հետքերը, փոքր ու անջինջ, այն գրկանքներուն, որոնք շիներ էին իմ ալ մանկութիւնը, ուր տիրական նոթ է, աշխարհ քաղաք: Ու ի՛նչ քաղաք: Իմ գրկանութեան մէջ այդ քաղաքը թուրքով է պայմանաւոր: Ու անոնք, որ հարիւր տարի յետոյ պիտի ենթարկեն հաշ-ւեյարդարի Արեւմտահայ գրական արդիւնքը ու դասաւորեն անոր մէջ հայ հոգիին երեսները, անարդար պիտի ըլլան, երբ իմ քաղաքը մերժեն իմ գրկանութեան, այն գլխաւոր պատճառով, որ անոր մէջ տիրականը թուրքն է: Կ'ընդունիմ, որ թուրքերուն քաղաքը արեւմրտեան քաղաքը չէ, ան՝ որուն կը հանդիպինք Արեւմուտքի վէպերուն մէջ: Բայց ստիպուած եմ աւելցնել, որ այդ ձիւնէն շողուած ու մորթուած կոյսերու արիւնով գոյնի ելած իշխանուհիները գեղ, լիճ, արտ, դաշտ, այգի, այսինքն՝ շարժումի ելած հայեր էին ու իբր այդ անցած են իմ գործէն ներս, որոնք թուրքէն շատ անդին ինկող ապրումներ են: Տակաւին կը զգայի անորակելի այն լքու-